ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

375010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5, հեռ. 51-17-48

№ ԴԴ - 6 Ֆ 2335
«29» ապրիլի 2015թ.
թիվ ԵԷԴ/1210/02/14

ՀՀ գյուղատնտեսության
նախարարություն

(ք. Երևան, Կառավարական տուն 3)

«ԲԻՈ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ» ՍՊԸ-ին

(ք. Երևան, Ավանեսովի 2/1 շին. 44)

«ԴՐ.ԹՈՄԱՍ ՄՅՈՒԼԼԵՐ-ՅՈՒԽՏ-ՈՒՆԴ
ՆՈՒՏՅՎԻՀ» կազմակերպությանը

*(Գերմանիայի Դաշնային Հանրապետություն,
3957 Բրոեւգշտալ ՕՏ Բլեթց Բրայթե փող., 20)*

Ուղարկվում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 01.04.2015թ. «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին» որոշումը «04» թերթից:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ

04. 05 2015 թ.
ՄՈՍԿՎԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1210/02/14
Նախագահող դատավոր՝ Հ. Ենոքյան
Դատավորներ՝ Ս. Միքայելյան
Ն. Բարսեղյան

Քաղաքացիական գործ թիվ ԵԷԴ/1210/02/14
2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<01>> ապրիլի 2015թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ս. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

քննարկելով ըստ հայցի ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ընդդեմ <<Բիո Ռինիվերսալ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) և <<Դր. Թոմաս Մյուլլեր-Յուխտ-Ռինդ-Նուտցվիհ>> կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ 1.837.800 ՀՀ դրամի բռնագանձման պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2015 թվականի որոշման դեմ Նախարարության բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Նախարարությունը պահանջել է Ընկերությունից և Կազմակերպությունից բռնագանձել 1.837.800 ՀՀ դրամ:

Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 23.10.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 12.02.2015 թվականի որոշմամբ Նախարարության վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 23.10.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Նախարարությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով:

Բողոքում պատճառաբանվել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը սույն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը պատճառաբանում է հետևյալ հիմնավորմամբ.

Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ:

Բողոք բերած անձը նշված հիմնավորումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը սխալմամբ հանգել է հետևության, որ Նախարարության կողմից վերաքննիչ դատարանում հայտնած դիրքորոշումը Դատարանում չի հայտնվել, հետևաբար վերաքննիչ բողոքն այդ մասով ենթակա չէ քննության, մինչդեռ նման հետևությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ <<ՀՀ գյուղատնտեսության նախարարության դիրքորոշումը պատասխանողների առարկությունների վերաբերյալ>> վերնագրված 21.08.2014 թվականի թիվ ԱԿ/ԱԱ-1/45000-14 գրությամբ հստակ ձևակերպված է եղել Նախարարության դիրքորոշումը և այդպիսի դիրքորոշում հայտնված լինելն արտացոլվել է նաև Դատարանի վճռում:

Բացի այդ, Դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից Ուկրաինայի անասնաբուժական և ֆիտոսանիտարական ծառայության 24.04.2013 թվականի թիվ 15-9-2-2-11/5439 գրությամբ ներկայացված պահանջը որպես անհաղթահարելի ուժի ազդեցության առաջացման հիմք դիտարկելը հիմնավոր չէ՝ այն բազմակողմանի, լրիվ և օբեկտիվ չհետազոտելու հետևանքով, քանի որ տոհմային երինջները Հայաստանի Հանրապետություն ներկրելու ճանապարհը չի անցնում միայն Ուկրաինայով և այդ ճանապարհի ընտրությունը Նախարարության կողմից որևէ կերպ պարտադրված չի եղել: Հաշվի առնելով, որ ինչպես ՀՀ օրենսդրությամբ, այնպես էլ պայմանագրով որևէ պահանջ սահմանված չէ ներմուծվող տոհմային կենդանիների փոխադրման ճանապարհի ընտրության համար, հետևաբար Ընկերությունն ու Կազմակերպությունը հնարավորություն ունենալով տոհմային երինջները Հայաստանի Հանրապետություն

փոխադրելու համար ընտրել այլ ճանապարհ՝ այդպիսով ձեռնարկելով պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարում՝ չեն իրականացրել իրենցից կախված բոլոր միջոցները պարտավորությունների կատարման համար, հետևաբար նման պայմաններում ստեղծված իրավիճակը չի կարող գնահատվել որպես- անհաղթահարելի ուժի ազդեցություն:

Բողոք բերած անձը պահանջել է <<ամբողջությամբ բեկանել Վերաքննիչ դատարանի 12.02.2015 թվականի որոշումը>>:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանը, քննարկելով բողոք բերած անձի հիմնավորումը՝ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու մասին, գտնում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են նույն օրենսգրքի 233-րդ հոդվածով, 233.1-րդ հոդվածով և 234-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որ կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը նույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ներկայացնելու դեպքում վճռաբեկ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում պետք է նշի այն նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա: Մինչդեռ սույն գործով բողոք բերած անձի՝ ներկայացրած փաստարկները բավարար չեն դատական սխալի առկայությունը և գործի ելքի վրա դրա ազդեցությունը հիմնավորված համարելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բերված բողոքը չի պարունակում այն քննության ընդունելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այլ հիմնավորումներ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում ներկայացված հիմնավորումները բավարար չեն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով բողոքը քննության ընդունելու հետևության հանգելու համար: Հետևաբար քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.2-րդ և 241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Թիվ ԵԷԴ/1210/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 12.02.2015 թվականի որոշման դեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

Դատավորներ՝ Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Վ. ԱԲԵԼՅԱՆ

Մ. ԱՌՏՈՒՅԱՆ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Մ. ԴՐՄԵՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Հասցեն՝ 0026, Ք. Երևան, Գ.Նժդեհի 23
Հեռ. 447-188 (227)
№ ԴԴ-9-187/15
« 12 » 01. 2015թ.

Պատասխանող՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը
(Հասցեն՝ ք. Երևան, Կառավարական տուն 3)

Ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 7-րդ մասով, ուղարկվում է թիվ ՎԴ/4392/05/11 վարչական գործով 12.01.2015 թվականին կայացված վճիռը:

Առդիր վճիռը՝ « 7 » թերթից:

Դատավոր Ա.Ծատուրյանի օգնական՝

ՀՀ Գյուղ. նախ.
Վարչատնտեսական վարչություն
Էջ Կարապետյան
19 01 2015 թ.
Մուտք № Ղ/276-15

Գործ թիվ ՎԴ/4392/05/11

Վ Ճ Ի Ռ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

12 հունվարի 2015թ. ք.Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝
նախագահությամբ՝ դատավոր Արթուր Ծատուրյանի
քարտուղարությամբ՝ Նարե Տոնոյանի
մասնակցությամբ՝

հայցվոր՝	Գեղամ Ալավերդյանի *(անձնագիր AK 0417260, տրված 29.12.2009թ., 026-ի կոմից, ք.Արարատ, ՈԿՖ-ի բան., շենք 10, բն. 67)*	ներկայացուցիչ՝ Հայկ Եգանյանի *(փաստաբանական գործ. արտոնագիր թիվ 523)*
պատասխանողներ՝	ՀՀ գյուղատնտեսության նախարարության *(ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3)*	ներկայացուցիչ՝ Գուրգեն Ավագյանի *(անձնագիր AM 0381103, տրված 18.07.2011թ., 012-ի կողմից)*
	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության *(ք.Երևան, Կոմիտասի 29/2)*	ներկայացուցիչներ՝ Խաչատուր Խաչատրյանի *(վկայական թիվ 212)* Հակոբ Աջեմյանի *(անձնագիր AF 00485609, տրված 22.05.2002թ., 004-ի կողմից)*
երրորդ անձ՝	ՀՀ ֆինանսների նախարարության *(ք.Երևան, Մելիք-Ադամյան 1)*	ներկայացուցիչ՝ Տաթևիկ Նահապետյանի *(վկայական թիվ 1833)*

դռնբաց դատական նիստում քննեց վարչական գործն ըստ հայցի՝ Գեղամ Ալավերդյանի ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վարչական մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և հետևանքներ կիրառելու պահանջի մասին:

1.<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

Գեղամ Ալավերդյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության՝ խնդրելով ոչ իրավաչափ ճանաչել 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակից հայցվորին հանելու՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործողությունը և պարտավորեցնել ընդունելու բարենպաստ վարչական ակտ իրեն այդ ցուցակում ընդգրկելու մասին, որպիսի հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Կ.Ավետիսյան) 17.10.2011 թվականի որոշմամբ ընդունվել է վարույթ:

ՀՀ վարչական դատարանի 07.03.2012 թվականի և 29.06.2012 թվականի որոշումներով գործով որպես երրորդ անձ և երկրորդ պատասխանող են ներգրավվել համապատասխանաբար՝ ՀՀ ֆինանսների նախարարությունն ու ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը:

ՀՀ վարչական դատարանի 2013 թվականի մայիսի 29-ի վճռով հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ հայցվոր Գեղամ Ալավերդյանի (ներկայացուցիչ՝ Հայկ Եգանյան) կողմից բերվել է վերաքննիչ բողոք:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի (նախագահող դատավոր՝ Ա.Բաբայան, դատավորներ՝ Հ.Բեղկյան, Ա.Սարգսյան) 10.12.2013 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2013 թվականի մայիսի 29-ի թիվ ՎԴ/4392/05/11 վարչական գործով կայացրած վճիռն ամբողջությամբ բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

Որոշման 2-րդ կետով ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը որոշել է. «Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում»:

Վերը նշված վարչական գործը 07.02.2014 թվականին մակագրվել է դատավոր Ա.Ծատուրյանին:

ՀՀ վարչական դատարանը 10.02.2014 թվականի որոշմամբ վարչական գործն ընդունել է վարույթ և հրավիրել նախնական դատական նիստ: Դատարանի 17.06.2014 թվականի որոշմամբ վարչական գործը նշանակվել է դատաքննության:

Որպես իր պահանջի հիմնավորում հայցվորը դատարան է ներկայացրել 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 32 դիահերձման ակտի, հարկադիր ոչնչացված կենդանիների ամփոփագրի, ՀՀ գյուղատնտեսության նախարարության 16.02.2011 թվականի գրության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 22.07.2011 թվականի թիվ 348 գրության պատճենները:

2.<u>Հայցվորի իրավական դիրքորոշումը.</u>

Հայցվորը դիմելով դատարան հայտնում է հետևյալը:

ՀՀ Արարատի մարզի Ռանչպար համայնքում 2007 թվականի նոյեմբեր ամսին արձանագրված խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով հարկադիր կարգով ոչնչացվել է իրեն պատկանող 504 գլուխ կենդանի՝ խոզ, որոնց ընդհանուր քաշը կազմել է 20.880կգ: Խոզերի հարկադիր սպանդի արդյունքներով 2007 թվականի նոյեմբերի 27-ին իրավասու մարմինների կողմից կազմվել է դիահերձման թիվ 32 ակտը և հարկադիր ոչնչացված կենդանիների ամփոփագիրը:

ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշման 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու նպատակով Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2008 թվականի առաջին եռամսյակում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը հատկացվել է 4.795.483.000 ՀՀ դրամ: Նույն որոշման 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության բռնկման պատճառով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին տրամադրվող օժանդակության գումարի չափը՝ կենդանիների մեկ կիլոգրամ մսեղիքի հաշվով, սահմանվել է 1005,0 ՀՀ դրամ:

Հետագայում ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 1415-Ա որոշմամբ կատարվել է փոփոխություն ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ա որոշման 1-ին կետում, որով օժանդակության չափը 4.795.483.000 ՀՀ դրամի փոխարեն սահմանվել է 3.585.483.000 ՀՀ դրամ:

ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշումից ելնելով, օժանդակություն ստանալու նպատակով ինքը դիմել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ ներկայացնելով խոզերի հարկադիր սպանդի արդյունքներով 2007 թվականի նոյեմբերի 27-ին կազմված դիահերձման թիվ 32 ակտը, հարկադիր ոչնչացված կենդանիների ամփոփագիրը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր: Դրանից հետո մի քանի անգամ հանդիպել է տվյալ խնդրով զբաղվող իրավասու պաշտոնատար անձանց, որոնք բանավոր հավաստիացրել են, որ անհանգստանալու պատճառ չկա և անպայման կստանա սահմանված օժանդակությունը: Չնայած նշված խոստումներին, խնդիրը պատշաճ լուծում չի ստացել և իրեն օժանդակություն չի տրամադրվել:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ «Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոն»-ի միջոցով 2011 թվականի հունվարի 14-ին թիվ 003/11 գրությամբ դիմել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ խնդրելով տալ պարզաբանումներ օժանդակության չտրամադրման պատճառների մասին:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, հղում կատարելով ՀՀ կառավարության ներքին աշխատանքային փաստաթղթի (2008 թվականի փետրվարի 07-ի նիստի թիվ 5 արձանագրություն) 32-րդ հարցի 2-րդ կետի 1-ին ենթակետին, հայտնել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարին հանձնարարվել է ճշտել 2007 թվականին

արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակը՝ այնտեղից հանելով խոշոր տնտեսավարող սուբյեկտներին:

Սակայն նշված գրությամբ չի մասնավորեցվել, թե արդյոք հայցվոր Գեղամ Ալավերդյանը հանդիսանում է խոշոր տնտեսավարող սուբյեկտ, թե ոչ, ինչ չափանիշներով, ինչ հիմքով է դասակարգվել «խոշորը» և «ոչ խոշորը», և վերջապես չի նշվել թե արդյոք Գեղամ Ալավերդյանին օժանդակություն տրամադրվելու է, թե ոչ:

Վերը նշվածից ելնելով, ստիպված է եղել երկրորդ անգամ 2011 թվականի հունիսի 29-ին փաստաբանական հարցմամբ դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը՝ խնդրելով վերջապես պարզաբանել, թե արդյոք Գեղամ Ալավերդյանին տրամադրվելու է օժանդակություն, թե ոչ: Եթե այո, ապա երբ, իսկ եթե ոչ, ապա խնդրել է տրամադրել մերժման հիմնավորումներն ու դրա իրավական հիմքերը:

Ի պատասխան վերոհիշյալ հարցման՝ 2011 թվականի օգոստոսի 11-ին ստացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2011 թվականի հուլիսի 22-ի թիվ 348 գրությունը, որից պարզվել է, որ վերոհիշյալ ցուցակից հանվել են իր տվյալները, որի արդյունքում իրեն օժանդակություն չի տրամադրվելու:

Հիմնավորումներ ու իրավական հիմքեր նշված գրությամբ չի ներկայացվել: Նշված գրությամբ չի ներկայացվել նաև այն վարչական ակտը, որով իրավասու մարմինը վերացրել կամ սահմանափակել է հայցվոր Գեղամ Ալավերդյանի օժանդակություն ստանալու իրավունքը: Ըստ հայցվորի ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործողություններն իրավաչափ չեն, չեն բխում ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշման պահանջներից, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Նշված սահմանադրական նորմը, ամրագրելով իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, միաժամանակ օրենսդրին հասցեագրել է հիմնարար առաքելություն՝ օրենքների հիման վրա որոշելու պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իրավասությունը (լիազորությունը)՝ իշխանությունն իրականացնելիս:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով կարգավորման ենթակա է օրենքով չկարգավորված ցանկացած հարաբերություն, եթե այդ հարաբերությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքով կամ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով ու կարգադրությամբ չպետք է կարգավորվի իրավական այլ ակտերով:

Տվյալ դեպքում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդությունը և դրա հետևանքների վերացումը մասնավոր երևույթ է և բնականաբար հնարավոր չէր կանխատեսել և օրենքով կարգավորել նման իրավահարաբերությունների ծագումը, փոփոխումը և դադարեցումը, հետևաբար նմանատիպ հարաբերությունների կարգավորման իրավասությունը ՀՀ օրենսդրությամբ վերապահվել է ՀՀ կառավարությանը, որն էլ 2008 թվականի փետրվարի 07-ին ընդունել է թիվ 84-Ն որոշումը: Ընդ որում՝ նշված որոշումը նորմատիվային է, քանի որ այն ուղղված է 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն տրամադրելու նորմերի սահմանմանը: Հետևաբար ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և (կամ) յուրաքանչյուր պաշտոնատար անձ նշված իրավահարաբերությունների կարգավորման շրջանակներում պետք է ղեկավարվի միայն ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշման պահանջներով: Մինչդեռ, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, ի դեմս սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, մերժել է իրեն օժանդակություն տրամադրելու պահանջն այնպիսի հիմնավորմամբ, ինչպիսին ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշումը չի նախատեսում: Ավելին՝ ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշումը չի տարբերակում «խոշոր» և «ոչ խոշոր» սուբյեկտ հասկացությունները, չի սահմանում օժանդակության տրամադրման որևէ բացառություն և (կամ) վերապահում: Հետևաբար միանշանակ պետք է ենթադրել, որ վարչական մարմինը և (կամ) դրա պաշտոնատար անձինք պարտավոր էին տրամադրել օժանդակություն բոլոր տուժած սուբյեկտներին, անկախ վերջիններիս գործունեության ծավալներից:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հայցվորն արդարացիորեն շահագրգռված է պահանջել ճանաչելու ոչ իրավաչափ 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակից իրեն հանելու ՀՀ գյուղատնտեսության նախարարության գործողությունը, քանի որ օժանդակություն ստանալու իրավունքից զրկելու պատճառով վերջինս մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում:

Ինչ վերաբերում է գրություններում վկայակոչված, սակայն իրեն չտրամադրված թիվ 5 արձանագրությանը, ապա նշված արձանագրությունը չի կարող իրավունք սահմանափակող կամ որևէ նորմատիվային դրույթ պարունակող իրավական ակտ համարվել: Այն ընդամենը հանդիսանում է ներքին աշխատանքային փաստաթուղթ և ուղղված է միայն ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշմամբ սահմանված գործընթացի կազմակերպմանը: Հետևաբար դրանով չի կարող փոփոխվել ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշման նորմատիվային դրույթները կամ սահմանվել այնպիսի պայման, որը կհակասի այն ակտին, ի կատարումն որի ընդունվել է նշված աշխատանքային փաստաթուղթը: Հակառակ դեպքում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի և 70-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշման մեջ յուրաքանչյուր փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի, այսինքն՝ նորմատիվ իրավական ակտով, ինչը տվյալ դեպքում բացակայում է:

Ուստի միանշանակ պետք է արձանագրել, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության վարչարարությունն՝ ուղղված իրեն օժանդակության տրամադրման մերժմանը, եղել է ոչ օրինական, ինչը հանդիսանում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանված օրինականության հիմնարար սկզբունքի խախտում:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված հայցադիմումի պատասխանի դեմ ներկայացված առարկություններում հայցվորի ներկայացուցիչը հայտնում է հետևյալը:

ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանից պարզվում է, որ նախարարության միակ փաստարկը կայանում է նրանում, որ Գեղամ Ալավերդյանն իբր չի կարող օգտվել օժանդակության ստանալու իր իրավունքից, քանի որ նրա կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն որոշման հավելվածով սահմանված ընթացակարգը: Ըստ հայցվորի՝ վերը նշված պնդումն անհիմն է և չի կարող հայցի մերժման հիմք հանդիսանալ, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն նորմատիվ որոշման հիման վրա ընդունվել է ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ա որոշումը: Նշված որոշմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը գումարը հատկացվել է 2007 թվականի ընթացքում անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու նպատակով, միաժամանակ, սահմանվել է նաև օժանդակության գումարի չափը՝ մեկ կիլոգրամ մսեղիքի համար: Ուստի ակնհայտ է, որ Գեղամ Ալավերդյանին 2007 թվականին անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների համար օժանդակության գումարի տրամադրումը պետք է լիներ ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ա որոշման կիրառմամբ, որը ընթացակարգի պարտադիր պահպանման պայման չի նախատեսում: ՀՀ կառավարության նշված որոշումների կիրառմամբ անձին օժանդակություն տրամադրելու որոշումը նորմատիվ իրավական ակտի հիման վրա ընդունվող բարենպաստ վարչական ակտ է, որի ընդունմանն ուղղված գործունեությունն էլ համարվում է վարչական վարույթ, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի:

Վարչական վարույթի փուլերից է վարչական վարույթի հարուցումը, որը տվյալ դեպքում՝ եղել է Գեղամ Ալավերդյանի դիմումի հիման վրա:

ՀՀ կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 06-ի թիվ 1108-Ն որոշման 1-ին հավելվածի 9-րդ կետի համաձայն տեղական հանձնաժողովները ստեղծվում են մարզերում, տարածաշրջաններում և համայնքներում, իսկ 15-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն համայնքի հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համայնքի ղեկավարը՝ որպես տեղական հանձնաժողովի նախագահ, համայնքի անասնաբույժը՝ որպես հանձնաժողովի նախագահի տեղակալ, և հանձնաժողովի անդամների կարգավիճակով համայնքի հաշվապահը, ավագանու անդամը և այլն:

Այսինքն՝ տեղական հանձնաժողովին դիմելը կնշանակի դիմել հանձնաժողովի նախագահին, որպիսին համարվում է համայնքի ղեկավարը:

Սույն վարչական գործում առկա Գեղամ Ալավերդյանին պատկանող «ՀՀ Արարատի մարզի Ռանչպար համայնքում 2007 թվականի նոյեմբեր ամսին արձանագրված խոզերի աֆրիկյան

ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր ոչնչացված կենդանիների» ամփոփագիրը ստորագրված է համայնքի ղեկավարի, համայնքապետի տեղակալի, համայնքի անասնաբույժի և ավագանու կողմից, իսկ դիահերձման 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 32 ակտը ստորագրվել են «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ-ախտաբանաանատոմ Ա.Խաչատրյանի, համաճարակաբան Գ.Վարդանյանի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության Մասիսի տարածաշրջանի անասնաբուժական տեսչության պետ Հ.Գաբրիելյանի կողմից:

Վերը նշված փաստաթղթերով հաստատվում է, որ հայցվոր Գեղամ Ալեվարդյանը դիմել է հանձնաժողովի նախագահին, իսկ մնացած գործողությունները արդեն պետք է կատարվեին և կատարվել են հանձնաժողովի նախագահի գլխավորությամբ:

Նշված փաստերը վկայում են, որ հայցվոր Գեղամ Ալավերդյանը պատշաճ կատարել է համաճարակի մասին անհապաղ տեղեկացնելու իր պարտականությունը:

Բացի այդ, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն ընդունել է խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով 504 գլուխ խոզերի անկման փաստը: Ընդ որում՝ թե՛ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, և թե՛ ՀՀ ֆինանսների նախարարությունը հիվանդության տեսակի, համաճարակի մասով որևէ առարկություն չեն ներկայացրել: Հայցվորին օժանդակություն չտրամադրելու պատճառն էլ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պատճառաբանել է նրանով, թե իբր ՀՀ կառավարության ներքին աշխատանքային փաստաթղթի (2008 թվականի փետրվարի 07-ի նիստի թիվ 5 արձանագրություն) 32-րդ հարցի 2-րդ կետի 1-ին ենթակետով որոշվել է խոշոր տնտեսվարող սուբյեկտներին օժանդակություն չտրամադրել: Այլ պատճառաբանություն (այդ թվում՝ ընթացակարգի խախտման մասին) վարչական որևէ մարմին հայցվորին չի ներկայացրել: Հետևաբար պետք է միանշանակ արձանագրել, որ խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության դեմ պայքարի աշխատանքների կազմակերպման և ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն որոշման հավելվածով սահմանված ընթացակարգի պահպանման պատասխանատվությունը ՀՀ կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 06-ի թիվ 1108-Ն որոշման 111-րդ բաժնի 7-րդ կետի համաձայն կրում է ոչ թե տնտեսավարող սուբյեկտը, այլ վարչական մարմինը, տվյալ դեպքում՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից վկայակոչված ՀՀ կառավարության թիվ 82-Ն որոշումը ուժի մեջ է մտել 2008 թվականի փետրվարի 14-ին, մինչդեռ հայցվորի 504 գլուխ կենդանիները խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության պատճառով հարկադիր սպանդի են ենթարկվել և համապատասխան ակտն ու ամփոփագիրը կազմվել է 2007 թվականի նոյեմբերի 27-ին, ուստի եթե մի պահ ընդունենք ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը, ապա ամենամեծ ցանկության դեպքում հայցվորը չէր կարող առաջնորդվեր այդ պահին դեռևս գոյություն չունեցող իրավական ակտով սահմանված ընթացակարգով: Նման իրավիճակում, հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը, ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հայցադիմումի պատասխան չներկայացնելու փաստը, հայցվորը գտնում է, որ վեճի ճիշտ լուծման համար հիմք պետք է հանդիսանա նաև սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունելու հանգամանքը, որի հիման վրա պետք է կիրառվի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ա) կետը, ըստ որի՝ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում՝ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը: Սույն պարագայում ակնհայտ է, որ օժանդակություն տրամադրելու մասին համապատասխան որոշման բացակայության պայմաններում առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի ա) կետի կիրառման հիմքերը:

Դատաքննության ընթացքում հայցվորի ներկայացուցիչ Հայկ Եգանյանը հայտնեց, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության 16.02.2011 թվականի թիվ ԱԿ/141/589-11 գրությանը կից չի ներկայացվել որևէ հիմնավորող ապացույց, այդ թվում՝ հիշատակված ՀՀ կառավարության ներքին աշխատանքային փաստաթուղթը (2008 թվականի փետրվարի 07-ի նիստի թիվ 5 արձանագրություն), թե արդյոք Գեղամ Ալավերդյանը հանդիսանում է խոշոր տնտեսավարող սուբյեկտ, թե ոչ, ինչ հիմքով է դասակարգվել «խոշորը» և «ոչ խոշորը», և վերջապես չի նշվել, թե արդյոք Գեղամ Ալավերդյանին օժանդակություն տրամադրվելու է, թե ոչ: Այդ ատճառով հայցվորը կրկին է դիմել փաստաբանական հարցմամբ, որին ի պատասխան 11.08.2011 թվականին ստացվել

է ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2011 թվականի հուլիսի 22-ի թիվ 348 գրությունը, որից պարզվել է, որ վերոհիշյալ ցուցակից հանվել են հայցվորի տվյալները, որի արդյունքում նրան օժանդակություն չի տրամադրվելու: Այդ գրությանը կից նույնպես չի ներկայացվել որևէ հիմնավորող ապացույց: Նման ապացույց չի ներկայացվել նաև դատաքննության ընթացքում:

Բացի դա, պատասխանողները և երրորդ անձը չեն առարկել 2007 թվականին խոզերի աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով հայցվորին պատկանող 504 գլուխ խոզերի անկման փաստի, ինչպես նաև 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակում հայցվորի որևէ ժամանակահատվածում ընդգրկված լինելու փաստի դեմ:

Հետագայում սկսեցին առարկել հայցի դեմ, որպես փաստարկ բերելով հայցվորի «խոշոր տնտեսավարող» սուբյեկտ լինելու հանգամանքը, իսկ երբ անհրաժեշտ էր իրավական առումով այդ փաստարկը հիմնավորել, նրանց դիրքորոշումը կտրուկ փոխվեց և հնչեցված միակ փաստարկը եղավ այն, որ Գեղամ Ալավերդյանի կողմից չի պահպանվել ՀՀ Կառավարության 31.01.2008 թվականի թիվ 82 որոշման 2-րդ հավելվածով սահմանված ընթացակարգը, ինչից ելնելով, իբր նա չի կարող օգտվել օժանդակություն ստանալու իր իրավունքից:

Նախ, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և նրա ստորաբաժանումը հայցվորին օժանդակություն չտրամադրելու նման պատճառ չեն ներկայացրել: Բացի դա, ՀՀ Կառավարության 31.01.2008 թվականի թիվ 82 որոշումը ուժի մեջ է մտել 14.02.2008 թվականին, իսկ հայցվորին պատկանող 504 գլուխ խոզերը աֆրիկյան ժանտախտ հիվանդության հետևանքով հարկադիր սպանդի են ենթարկվել 27.11.2007 թվականին, հետևաբար ամենամեծ ցանկության դեպքում հայցվորը չէր կարող առաջնորդվել այդ պահին դեռևս գոյություն չունեցող իրավական ակտով սահմանված ընթացակարգով:

Բացի դա, դիտարկվող իրավահարաբերությունները կարգավորող ՀՀ Կառավարության 06.09.2007 թվականի թիվ 1108-Ն, 31.01.2008 թվականի թիվ 82-Ն որոշման, դրա հիման վրա ընդունված 07.02.2008 թվականի թիվ 84-Ա որոշման որևէ կետով տուժող սեփականատիրոջ վրա մարզային հանձնաժողովին կամ վերջինիս նախագահին դիմելու պարտավորություն չի դրվել, ինչպես նաև չի սահմանվել որևէ դրույթ, որի համաձայն դիմում չներկայացրած սեփականատերը կարող է զրկվել օժանդակություն ստանալու իրավունքից: Չնայած 2007 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 32 դիահերձման ակտով և հարկադիր ոչնչացված կենդանիների ամփոփագրով հաստատվում է, որ հայցվորը դիմել է հանձնաժողովի նախագահին, որպիսին համարվում է համայնքի ղեկավարը: Բացի դա, թիվ 32 դիահերձման ակտի վրա առկա է նշում այն մասին, որ դրա օրինակը տրամադրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Լ.Ռուխիկյանին և ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական տեսչության պետ Գ.Բաղիյանին:

Այսինքն, վարչական մարմինները տեղյակ են եղել հայցվորին պատկանող կենդանների սպանդի, դրանց գլխաքանակի և այլ փաստերի վերաբերյալ, տիրապետել են բոլոր փաստաթղթերին, սկզբնական շրջանում հայցվորին ընդգրկել են օժանդակություն ստացողների ցուցակում, սակայն որոշ ժամանակ անց նրան հանել են ցուցակից:

Բացի դա, ցուցակը, որից հանվել է հայցվորը մինչ օրս չի ներկայացվել դատարան, ինքը տեղյակ չէ, թե այդ ցուցակը հաստատվել է որևէ վարչական ակտով, թե աշխատակազմի ղեկավարի ստորագրությամբ, ոչինչ չի ներկայացվել դատարան, հայցվոր կողմը պահանջ է ներկայացրել, ելնելով պատասխանողների գրություններից, ենթադրելով, որ եղել է ցուցակ, որից հանվել է հայցվորը:

Պնդեց հայցը և խնդրեց այն բավարարել:

<u>3.Պատասխանողների և երրորդ անձի իրավական դիրքորոշումները.</u>

1.Պատասխանող ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հայցադիմումի պատասխանում հայտնում է հետևյալը:

2007 թվականին ՀՀ-ում արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին տրամադրվող օժանդակության կարգի և պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության համապատասխանաբար 82-Ն և 84-Ա որոշումներով:

Մասնավորապես, թիվ 82-Ն որոշմամբ սահմանվել է օժանդակություն ցուցաբերելու կարգը, այն ստանալու համար սեփականատիրոջ կողմից իրականացվող գործողությունները, իսկ 84-Ա որոշմամբ՝ տրամադրվող ընդհանուր օժանդակության չափը՝ գումարային արտահայտությամբ: Վկայակոչված թիվ 82-Ն որոշմամբ սահմանվել է հստակ ընթացակարգ, որը սույն դեպքում

հայցվորի կողմից չի պահպանվել, հետևաբար հայցվորը չի կարող հավակնել օժանդակություն ստանալուն: Հաջորդիվ՝ հայցվորի կողմից ներկայացված դիահերձման ակտը որևէ ապացուցողական ուժ չունի, քանի որ չի կազմվել և ստորագրվել Մարզային հանձնաժողովի կողմից:

Դատաքննության ընթացքում պատասխանող ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչ Գուրգեն Ավագյանը հայտնեց, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը իր դիրքորոշումը չի փոխել, ինչպիսի դիրքորոշում ունեցել են, այն էլ պնդում են հիմա, այսինքն՝ չի պահպանվել ՀՀ Կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանված ընթացակարգը, չի ներկայացվել որևէ փաստաթուղթ, որով հիմնավորվեր, որ հայցվորը դիմել է տեղական կամ մարզային հանձնաժողովին, որը պարտադիր էր քաղաքացու համար օժանդակությունը ստանալու համար: Այդպիսի պարտավորությունը դրված չէ, սակայն տեղական հանձնաժողովը պետք է արձանագրի փաստը:

Հայցի դեմ առարկեց և խնդրեց այն մերժել:

2.Պատասխանող ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) հայցադիմումի պատասխան չի ներկայացրել:

Դատաքննության ընթացքում Ծառայության ներկայացուցիչ Հակոբ Աջեմյանը ներկայացրեց Ծառայության պետի ՀՀ գյուղատնտեսության նախարար Ս.Կարապետյանին հասցեագրված գրությունն այն մասին, որ Ծառայությունը չի կարող թիվ ՎԴ/4392/05/11 գործով հանդիսանալ պատշաճ պատասխանող:

3.Երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարությունը հայցադիմումի պատասխանում հայտնում է հետևյալը:

ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ն որոշման 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու նպատակով Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2008 թվականի առաջին եռամսյակում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը հատկացրել է 3.585.483.000 ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից»:

2011 թվականի հունվարի 14-ին, 2011 թվականի հունիսի 29-ին Գեղամ Ալավերդյանը դիմել է պատասխանողին՝ օժանդակություն ստանալու նպատակով: 2011 թվականի հուլիսի 22-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության գրությամբ հայցվորը տեղեկացվել է, որ իր տվյալները հանվել են օժանդակություն ստացողների ցուցակից:

2007 թվականին Հայաստանի Հանրապետությունում արձանագրված խոզի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին տրամադրվող օժանդակության կարգի և պայմանների հետ կապված հարաբերությունները կարգավորված են ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն և 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ա որոշումներով:

Հիշյալ որոշումների ուսումնասիրությունից ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունը որևէ կերպ պատասխանատվություն չի կրում որևէ անասնահամաճարակի հետևանքով որևիցե սեփականատիրոջը պատճառված վնասի փոխհատուցման առումով:

Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի «Անասնահամաճարակի հետևանքով գյուղատնտեսական կենդանիների անկումների և հարկադիր սպանդի դեպքում սեփականատիրոջը ցուցաբերվող օժանդակության կարգը հաստատելու մասին» թիվ 82-Ն որոշմամբ, որպես բարի կամքի դրսևորում, որոշվել է անասնահամաճարակների հետևանքով հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին տրամադրել օժանդակություն, հաստատվել է անասնահամաճարակների հետևանքով հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների անկումների և հարկադիր սպանդի դեպքում սեփականատիրոջը ցուցաբերվող օժանդակության կարգը թիվ 1 հավելվածի համաձայն, անասնահամաճարակների հետևանքով գյուղատնտեսական կենդանիների անկումների և հարկադիր սպանդի դեպքում օժանդակության ենթակա սեփականատերերի գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների ցանկը՝ համաձայն որոշման թիվ 2 հավելվածի և անասնահամաճարակների հետևանքով անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին

ցուցաբերվող օժանդակության կազմակերպման ազգային հանձնաժողովի կազմը՝ թիվ 3 հավելվածի համաձայն:

Համաձայն հավելվածի 5-րդ կետի՝ անասնահամաճարակների հետևանքով անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների ցուցաբերվող օժանդակության կազմակերպման համար ՀՀ կառավարությունը ստեղծում է ազգային հանձնաժողով:

Հավելվածի 8-րդ կետով սահմանվում են հանձնաժողովի գործառույթները, որոնցից են՝ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների մասին տվյալների շտեմարանի ձևավորումը (Հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետ), լիազոր մարմին անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների համար սեփականատերերին պատճառված վնասի դիմաց տրամադրվող օժանդակության գումարի չափի վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը (Հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետ) և հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերված օժանդակության գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելը (Հավելվածի 8-րդ կետի 5-րդ ենթակետ):

Հավելվածի 9-րդ կետի համաձայն՝ ՀՀ մարզերում գյուղատնտեսական կենդանիների հարկադիր սպանդի գործընթացի կազմակերպման նպատակով ՀՀ մարզերում ստեղծվում են մարզային հանձնաժողովներ:

Հավելված 11-րդ կետով սահմանվում է մարզային հանձնաժողովի կազմը՝ լիազոր մարմնի մարզային կառույցների համապատասխան մարզպետարանների ստորաբաժանումների, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տարածքային ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև անասնաբույժեր և տնտեսվարողներ:

Հավելվածի 13-րդ կետի համաձայն՝ մարզային հանձնաժողովի հիմնական խնդիրը մարզում անասնահամաճարակների բռնկման ու տարածման կանխարգելման գործընթացի համակարգումը և այդ բնագավառում անհրաժեշտ կազմակերպման միջոցառումների իրականացումն է:

Մարզային հանձնաժողովի գործառույթները սահմանված են Հավելվածի 14-րդ կետով, այն է՝ ֆիզիկական և իրավաբանական անձնաց պատկանող՝ հատուկ վարակիչ հիվանդություններով վարակված գյուղատնտեսական կենդանիների ցանկի ճշտում և շտեմարանի ստեղծում (Հավելվածի 14-րդ կետի 3-րդ ենթակետ), հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների պատճառած վնասի համար տրամադրվող օժանդակության գործընթացի հրապարակայնության ապահովումը և լիազոր մարմին օժանդակության գումարի չափի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը (Հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետ): Հավելվածի 16-րդ կետի համաձայն՝ անասնահամաճարակների կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին օժանդակությունը տրամադրվում է մարզային հանձնաժողովների կողմից կազմված ակտերի հիման վրա: Ակտերը կազմվում են 3 օրինակից:

Հավելվածի 17-րդ կետի համաձայն՝ ակտի ձևը սահմանում է լիազոր մարմինը: Հավելվածի 18-րդ կետով սահմանվում է՝ գյուղատնտեսական կենդանիների անկումները գրանցելուց կամ հարկադիր սպանդն իրականացնելուց հետո մեկ շաբաթյա ժամկետում մարզային հանձնաժողովն ակտերի առաջին օրինակները և ակտերի ամփոփման արդյունքները ներկայացնում է հանձնաժողովին:

Իսկ Հավելվածի 19-րդ կետով նշվում է, որ Հանձնաժողովը երկշաբաթյա ժամկետում քննարկում է մարզային հանձնաժողովների կողմից ներկայացված ակտերը, ընդունում է որոշում գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության ձևի և գումարի չափի վերաբերյալ և լիազոր մարմին ներկայացնում առաջարկություն:

Վերոգրյալը միտում ունի փաստելու այն հանգամանքը, որ որոշմամբ սահմանվել է հստակ ընթացակարգ ՀՀ կողմից տրամադրվող օժանդակությունը ստանալու համար, այսինքն՝ հայցվորի կողմից.

1. Պետք է դիմում ներկայացվեր համապատասխան մարզային հանձնաժողովին, այլ ոչ թե ազգային հանձնաժողովին կամ գյուղատնտեսության նախարարությանը:

2. Մարզային հանձնաժողովի կողմից պետք է կազմվեր (ին) համապատասխան ձևի, համապատասխան ակտ (եր):

3. Մարզային հանձնաժողովի կողմից կազմված ակտերից 1-ին օրինակները 1 շաբաթյա ժամկետում պետք է ներկայացվեին ազգային հանձնաժողովին:

4. Ազգային հանձնաժողովը երկշաբաթյա ժամկետում քննարկելով համապատասխան մարզային հանձնաժողովի կողմից կազմված ակտերը կընդուներ որոշում գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության ձևի և գումարի չափի վերաբերյալ և առաջարկություն կներկայացներ լիազոր մարմին:

5. Լիազոր մարմինը ազգային հանձնաժողովի որոշման հիման վրա գանձապետական համակարգի միջոցով, կտրամադրեր համապատասխան օժանդակությունը (Հավելվածի 20-րդ կետ):

Իսկ սույն գործի շրջանակներում հայցվորի կողմից ոչ միայն սահմանված ընթացակարգը չի պահպանվել, այլ իր կողմից պնդած փաստերի հաստատման համար դատարանին են ներկայացրել 2007 թվականի նոյեմբերի 27-ի խոզերի հերձման վերաբերյալ թիվ 32 ակտը, որը որևէ կերպ որպես համապատասխան մարզային հանձնաժողովի կողմից կազմված ակտ չի կարող դիտվել (նույն հաջողությամբ հայցվորի կողմից դատարանին կարող էին ներկայացվել նաև որևէ թաղային լիազորի, ՀՀ ցանկացած քաղաքացու կողմից կազմված ակտեր, որոնք բնականաբար որևէ ապացուցողական ուժ չէին կարող ունենալ որոշման կիրառման համար): Եթե նույնիսկ մի պահ վերացականորեն ընդունենք այն փաստը, որ հայցվորի կողմից դատարանին ներկայացված վերը նշված ակտը կարելի է դիտել որպես մարզային հանձնաժողովի կողմից կազմված ակտ, ապա այդ դեպքում էլ պետք է փաստել, որ վերը նշված հանձնաժողովի կազմը չի համապատասխանում Հավելվածի 11-րդ կետով սահմանված մարզային հանձնաժողովների կազմին, այսինքն՝ վերը նշված ակտերը կազմվել են դրանք կազմելու իրավասություն չունեցող հանձնաժողովի կողմից:

Նման պայմաններում հաշվի առնելով բերված փաստերն ու հիմնավորումները, պարզ է դառնում, որ որոշման ուժով հայցվորին չի կարող տրամադրվել օժանդակության համապատասխան գումար, քանի որ հայցվորի կողմից որոշմամբ սահմանված ընթացակարգը չի պահպանվել. հայցվորի կողմից դատարան ներկայացված ակտը կազմված չէ որոշման համապատասխան մարզային հանձնաժողովների կողմից, ուստի խոսք որոշման դրույթների հայցվորին վերաբերելիության մասին լինել չի կարող: Ավելին, հայցվորի կողմից դատարանին ներկայացված 2007 թվականի նոյեմբերի 27-ի խոզերի հերձման վերաբերյալ կազմված ակտը, որևէ կերպ չի կարող ապացուցողական ուժ ունենալ, քանի որ կազմված չէ մարզային հանձնաժողովների կողմից և մարզային հանձնաժողովների կազմին առաջադրվող պայմանները նույնպես պահպանված չեն, ինչի պայմաններում էլ հայցվորի պահպնջն ակնհայտ անհիմն է և ենթակա է մերժման:

Դատաքննության ընթացքում երրորդ անձի ներկայացուցիչ Տաթևիկ Նահապետյանը հայտնեց, որ տվյալ դեպքում հարցը չի վերաբերում նրան, թե այդ ակտը, որը կազմվել է իրավաչափ է, թե ոչ: Տվյալ դեպքում հարց է գնում այն մասին, թե պահպանվել են այն ընթացակարգային նորմերը, որոնք սահմանում են և առաջացնում են փոխհատուցում, օժանդակություն տրամադրելու իրավունք, և պետական մարմինները սահմանափակված են այդ իրավական նորմերով, նորմատիվ ակտերով, մասնավորապես թիվ 1108-Ն կարգով:

Հայցի դեմ առարկեց և խնդրեց այն մերժել:

4.<u>Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը և ՀՀ վարչական դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.</u>

Լսելով դատավարության մասնակիցների ներկայացուցիչներին, գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ, հետազոտության արդյունքում դատարանը եզրակացրեց, որ հայցը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում, ներկայացված հայցով Գեղամ Ալավերդյանը խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի ցուցակից իրեն հանելու գործողությունները և պարտավորեցնել ընդունելու բարենպաստ վարչական ակտ իրեն այդ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

2007 թվականի նոյեմբերի 27-ին կազմվել է թիվ 32 դիահերձման ակտը, որից հետևում է, որ սույն գործով հայցվոր Գեղամ Ալավերդյանին պատկանած խոզերը հարկադիր սպանդի են ենթարկվել: Այդ ակտին էլ կցվել է համապատասխան ամփոփագիր՝ 504 գլուխ խոզերի ոչնչացման վերաբերյալ:

Դատարանը գտնում է, որ սույն վեճի լուծման համար կարևորագույն նշանակություն ունի այն հանգամանքի պարզումը, թե Գեղամ Ալավերդյանն ընդգրկված եղել է արդյոք 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի կազմում (ցուցակում), թե ոչ: Ընդ որում, նշված հանգամանքի պարզումը կարևորագույն նշանակություն ունի թե Գեղամ

Ալավերդյանին 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի կազմից (ցուցակից) հանելու գործողություններն ոչ իրավաչափ ճանաչելու, թե 2007 թվականին արձանագրված՝ խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի կազմում (ցուցակում) Գեղամ Ալավերդյանին ընդգրկելուն պարտավորեցնելու պահանջներով վեճի լուծման համար:

Դատարանն ուշադրություն է դարձնում այն հանգամանքի վրա, որ դիահերձման ակտի կազմման պահին որևէ իրավական ակտով կարգավորված չեն եղել Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու հետ կապված հարաբերությունները: Դրանք կարգավորվել են ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն և ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 07-ի թիվ 84-Ա որոշումներով: Հետևապես դատարանի համոզմամբ սույն իրավահարաբերությունների նկատմամբ կիրառելի են վկայակոչված որոշումները, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանցով, մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն որոշմամբ, սահմանվում է Հայաստանի Հանրապետությունում անասնահամաճարակների բռնկման պատճառով գյուղատնտեսական կենդանիների անկումների և դրանց տարածման կանխարգելման նպատակով հարկադիր սպանդի ենթարկված անասնագլխաքանակի արժեքի դիմաց սեփականատեր ֆիզիկական և իրավաբանական անձանց օժանդակություն ցույց տալու կարգը, ինչպես նաև համապատասխան ընթացակարգերը, լիազոր մարմինը և մեխանիզմները, որոնց հիման վրա իրականացվում է օժանդակության տրամադրումը: Իսկ թիվ 84-Ա որոշմամբ սահմանված է մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու չափը՝ դրամական արտահայտությամբ:

Այսպես՝ ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն որոշմամբ հաստատվել է՝

1. Անասնահամաճարակների հետևանքով գյուղատնտեսական կենդանիների անկումների և հարկադիր սպանդի դեպքում սեփականատիրոջը ցուցաբերվող օժանդակության կարգը (Հավելված 1, այսուհետ՝ Կարգ).

2. Անասնահամաճարակների հետևանքով գյուղատնտեսական կենդանիների անկումների և հարկադիր սպանդի դեպքում օժանդակության ենթակա սեփականատերերի գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների ցանկը (Հավելված 2, այսուհետ՝ Ցանկ).

3.Անասնահամաճարակների հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության կազմակերպման ազգային հանձնաժողովի կազմը (Հավելված 3, այսուհետ՝ Կազմ):

Կարգի 1-ին կետով սահմանվում են անասնահամաճարակների բռնկման պատճառով գյուղատնտեսական կենդանիների անկումների և դրանց տարածման կանխարգելման նպատակով հարկադիր սպանդի ենթարկված անասնագլխաքանակի արժեքի դիմաց սեփականատեր ֆիզիկական և իրավաբանական անձանց ցուցաբերվող օժանդակության հետ կապված հարաբերությունները:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ օժանդակությունը (դրամական կամ այլ տեսքով) ցուցաբերվում է այն անասնահամաճարակների դեպքում, որոնք հանգեցնում են գյուղատնտեսական կենդանիների անխուսափելի անկումների, և դրանց տարածման կանխարգելման առավել արդյունավետ միջոցը վարակված գյուղատնտեսական կենդանիների հարկադիր սպանդն է:

Կարգի 5-րդ կետի համաձայն՝ անասնահամաճարակի հետևանքով անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստեղծում է ազգային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ գյուղատնտեսության ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ Լիազոր մարմին) ներկայացմամբ:

Կարգի 9-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մարզերում գյուղատնտեսական կենդանիների հարկադիր սպանդի գործընթացի կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության մարզերում ստեղծվում են մարզային հանձնաժողովներ (այսուհետ՝ Մարզային հանձնաժողով):

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ անասնահամաճարակի պատճառով անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին օժանդակությունը տրամադրվում է Մարզային հանձնաժողովների կողմից կազմված ակտերի հիման վրա: Ակտերը կազմվում են 3 օրինակից:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ գյուղատնտեսական կենդանիների անկումները գրանցելուց կամ հարկադիր սպանդն իրականացնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում Մարզային հանձնաժողովն ակտերի առաջին օրինակները և ակտերի ամփոփման արդյունքները ներկայացնում է Հանձնաժողով:

Կարգի 19-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը երկշաբաթյա ժամկետում քննարկում է Մարզային հանձնաժողովների կողմից ներկայացված ակտերը, ընդունում է որոշում գյուղատնտեսական կենդանիների սեփականատերերին ցուցաբերվող օժանդակության ձևի և գումարի չափի վերաբերյալ և Լիազոր մարմին ներկայացնում առաջարկություն:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ օժանդակությունը Լիազոր մարմնի կողմից տրամադրվում է անմիջապես տուժած սեփականատիրոջը՝ գանձապետական համակարգի միջոցով:

Ցանկով ամրագրված հիվանդությունների շարքում զետեղված է նաև խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդությունը:

Վկայակոչված նորմերի համակարգային վերլուծությունից բխում է, որ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերը, այդ թվում՝ հայցվորը, օժանդակություն ստանալու տեսանկյունից պետք է հետամուտ լինեին որոշակի գործողությունների կատարմանը:

Մասնավորապես, սույն դեպքում հայցվորն օժանդակություն ստանալու համար պետք է դիմեր Մարզային հանձնաժողովին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կարգի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության մարզերում բռնկված անասնահամաճարակների դեպքում օժանդակությունը տրամադրվում է Մարզային հանձնաժողովի կողմից կազմված և ազգային հանձնաժողովին ներկայացված ակտերի հիման վրա: Իսկ սույն դեպքում խոսքը վերաբերում է ՀՀ Արարատի մարզում բռնկված հիվանդության պատճառով կենդանիների անկմանը: Ընդ որում՝ հաշվի առնելով, որ մինչև ՀՀ կառավարության թիվ 82-Ն որոշման ընդունումն արդեն իսկ կազմված էր հայցվորին պատկանած կենդանիների հարկադիր սպանդի դիահերձման ակտը, ուստի դատարանի համոզմամբ, այն պետք է ներկայացվեր Մարզային հանձնաժողովի հաստատմանը, կամ առնվազն հայցվորի դիմումի հիմքով Մարզային հանձնաժողովը պետք է արձանագրեր նրան պատկանած կենդանիների հարկադիր անկման փաստը՝ իր կողմից այդ կենդանիների հարկադիր սպանդը կազմակերպված չլինելու պայմաններում (Կարգի 18-րդ կետ):

Մինչդեռ, վկայակոչված գործողությունների կատարման համար համապատասխան մարմնին դիմելու փաստը հիմնավորող որևէ ապացույց հայցվորի կողմից չի ներկայացվել: Ավելին՝ հայցվորի համոզմամբ հիշյալ որոշմամբ ամրագրված կանոնակարգումներն իր նկատմամբ կիրառելի չեն, քանի որ դիահերձման ակտը կազմվել է ավելի վաղ, քան ընդունվել է օժանդակության տրամադրման հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտը:

Այս կապակցությամբ դատարանն արդեն իսկ սույն դատական ակտում մատնանշել է, որ դիահերձման ակտի կազմման պահին անասնահամաճարակի բռնկման հետևանքով կենդանիների անկման դիմաց օժանդակություն տրամադրելու հետ կապված հարաբերություններն իրավական կանոնակարգում չեն ունեցել, հետևապես դիահերձման ակտի կազմման պահին հայցվորն օբյեկտիվորեն չէր կարող համոզմունք ունենալ, որ այդ ակտը և դրա հիման վրա կազմված ամփոփագիրը բավարար հիմք են օժանդակություն ստանալու տեսանկյունից:

Բացի դա, Կարգով սահմանված չէ, որ մինչև դրա ընդունումը որևէ մարմնի կողմից կազմված ակտերը դիտվում են որպես համապատասխան փաստը հաստատող ապացույցներ: Հայցվորի առնչությամբ կազմված ակտը նա պարտավոր էր Կարգի համաձայն ներկայացնել իրավասու հանձնաժողովին՝ Մարզային հանձնաժողովին: Վերջինս էլ դրա հիման վրա կազմված իր փաստաթուղթը պետք է ներկայացներ Հանձնաժողովին, որն էլ իր իրավասության շրջանակում հապատասխան փաստաթուղթ կազմեր և ներկայացներ Լիազոր մարմնին: Մինչդեռ այդ ընթացակարգերը չեն կատարվել, որի համար հայցվորը ինքը պետք է համապատասխան դիմում ներկայացներ:

Այսպիսով, դատարանը փաստում է, որ հայցվորի կողմից չեն պահպանվել ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն որոշմամբ հաստատված Կարգով ամրագրված ընթացակարգերը:

Ինչ վերաբերում է հայցվորի այն փաստարկին, որ ծևավորված իրավահարաբերությունը կարգավորվում է ՀՀ կառավարության թիվ 84-Ա որոշման շրջանակներում, իսկ դրանով որևէ

ընթացակարգ կամ վավերապայման նախատեսված չէ, ապա այն հիմնավոր չէ, քանի որ օժանդակություն ստանալու կամ տրամադրելու հետ կապված կանոնակարգումներն ամրագրվել են թիվ 82-Ն որոշմամբ, իսկ թիվ 84-Ա որոշմամբ սահմանվել է մասնավոր դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակություն ցույց տալու նպատակով Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվող գումարի չափը: Ընդ որում՝ թիվ 84-Ա որոշումն ընդունվել է ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 31-ի թիվ 82-Ն որոշման հիման վրա:

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 06-ի թիվ 1108-Ն որոշման առնչությամբ հայցվորի այն փաստարկին, որ դիահերձման ակտը և դրա հիման վրա ամփոփագիրը կազմվել են իրավասու պաշտոնատար անձանց կողմից, ինչը նշանակում է, որ հայցվորի կողմից պահպանվել են անհրաժեշտ ընթացակարգերը, ապա դատարանն այն նույնպես հիմնավոր չի համարում, քանի որ հիշյալ որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է Հայաստանի Հանրապետությունում խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության վերացման և տարածման կանխարգելման միջոցառումների ծրագիրը, Հայաստանի Հանրապետությունում խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության վերացման և տարածման կանխարգելման միջոցառումների ծրագիրը համակարգող հանրապետական արտակարգ հակաանասնահամաճարակային հանձնաժողովի կազմը, Հայաստանի Հանրապետությունում խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության վերացման և տարածման կանխարգելման միջոցառումների պլանը: Այսինքն՝ որոշմամբ կանոնակարգվում են խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության վերացման և տարածման կանխարգելման հետ կապված հիմնախնդիրները, որոնք որևէ կերպ չեն կարող վերագրվել արդեն իսկ անկած կամ հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին օժանդակության տրամադրման հետ կապված իրավահարաբերություններին և դրանց կանոնակարգումներին:

Դատարանի հանձնարարության համաձայն՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 16.06.2014 թվականի թիվ ԱԿ/ԱԱ-1/3138-14 գրությամբ հայտնել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում 27.11.2007 թվականի դիահերձման ակտ առկա չէ: Բացի դա, նշված գրությամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը դատարանին հայտնել է, որ 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերի կազմում (ցուցակում) Գեղամ Ալավերդյանի ընդգրկված լինելու վերաբերյալ տեղեկություններ առկա չեն:

Ներկայացվել են նաև այն սեփականատերերի ցանկերը, որոնց համաձայն 2008 թվականին պետական բյուջեով ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդից Հայաստանի Հանրապետության տարբեր համայնքներում 2007 թվականին արձանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր սպանդի ենթարկված կենդանիների սեփականատերերին տրվել է օժանդակություն: Այդ ցանկերում ընդհանրապես բացակայում է որևէ ցանկ՝ Արարատի մարզի Ռանչպար համայնքի որևէ սեփականատիրոջ օժանդակություն տալու վերաբերյալ:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը վերոնշյալ գրությանը կից դատարանին տրամադրել է Արարատի մարզի Ռանչպար համայնում 2007 թվականի նոյեմբերին Գեղամ Ալավերդյանի տնտեսությունում ածանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր ոչնչացված կենդանիների ամփոփագրի պատճենը: Այդ ամփոփագրից հետևում է, որ Արարատի մարզի Ռանչպար համայնքում 2007 թվականի նոյեմբերին Գեղամ Ալավերդյանի տնտեսությունում ածանագրված խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկել և հարկադիր ոչնչացվել է Գեղամ Ալավերդյանին պատկանած 504 գլուխ խոզ՝ 208.80կգ քաշով: Ամփոփագիրը ստորագրել են Ռանչպար համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի տեղակալը, անասնաբույժը և ավագանու մեկ անդամ, ինչպես նաև Գեղամ Ալավերդյանը, որը ամրագրվել է համայնքի կնիքով:

Մինչդեռ հայցվորը ներկայացրել է 27.11.2007 թվականի թիվ 32 դիահերձման ակտը, որից հետևում է, որ իրեն պատկանած խոզերը հարկադիր սպանդի են ենթարկվել խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության կասկածանքի պատճառաբանությամբ: Այդ ակտին էլ կցվել է վերոնշյալ ամփոփագիրը՝ 504 գլուխ խոզերի ոչնչացման վերաբերյալ, սակայն դիահերձման ակտում որևէ նշում չկա այն մասին, որ ամփոփագիրը կազմում է դրա բաղկացուցիչ մասը կամ կցվում այդ ակտին:

Հայցվորը հիմնվում է հենց վերոնշյալ դիահերձման ակտի և ամփոփագրի վրա, որոնք ինքը ներկայացրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ օժանդակություն ստանալու նպատակով: Մինչդեռ օժանդակություն չի ստացել:

Այդ առնչությամբ դատարանը նշում է հետևյալը:

Կարգի համաձայն՝ հայցվորը պարտավոր էր դիահերձման ակտը և ամփոփագիրը՝ համապատասխան այլ փաստաթղթերի հետ միասին, ներկայացնել ոչ թե ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, այլ համապատասխան Մարզային հանձնաժողովին, որն էլ պարտավոր էր հայցվորի դիմումի և դրան կից փաստաթղթերի հիման վրա ընդունել իր փաստաթուղթը, ապա դա և կից փաստաթղթերը ներկայացնել Հանձնաժողովին: Եվ միայն վերջինս էր իրավասու անկած և հարկադիր ոչնչացված կենդանիների փաստի առթիվ ակտ ընդունել և ներկայացնել Լիազոր մարմնին: Լիազոր մարմինն էլ իրավասու էր վերջնական որոշում կայացնել հայցվորի վերաբերյալ՝ նրան դրամական օժանդակություն տալու մասին:

Սույն գործի փաստերը վկայում են այն մասին, որ հայցվոր կողմը բավարարվել է միայն 27.11.2007 թվականի թիվ 32 դիահերձման ակտով և ամփոփագրով, համարելով, որ դրանք բավարար փաստաթղթեր են անկած և հարկադիր ոչնչացված 504 գլուխ խոզի դիմաց Կարգի հիման վրա օժանդակություն ստանալու համար: Մինչդեռ նրա այդ դիրքորոշումը չի բխում Կարգի պահանջներից:

Ուստի դատարանը գտնում է, որ Կարգի պահանջները չպահպանած լինելու հանգամանքը բավարար է եզրահանգելու, որ հայցն անհիմն է և ենթակա է մերժման: Քանի որ Հանձնաժողովի ակտի, այլ ոչ թե 27.11.2007 թվականի դիահերձման ակտի և ամփոփագրի և այլ փաստաթղթի հիման վրա է իրավասու Լիազոր մարմինը որոշում կայացնելու օժանդակություն ցույց տալու մասին:

Բացի դա, անդրադառնալով 27.11.2007 թվականի թիվ 32 դիահերձման ակտին, դատարանը գտնում է, որ եթե նույնիսկ Կարգով նախատեսված լիներ այդպիսի ակտի հիման վրա օժանդակություն ցույց տալու, ապա առնվազն վիճելի պետք է համարվեր օժանդակություն տրամադրելը հետևյալ պատճառաբանությամբ:

27.11.2007 թվականի թիվ 32 դիահերձման ակտով չի արձանագրվել, որ հայցվորին պատկանած խոզերը վարակված են եղել աֆրիկական ժանտախտով: Այդ ակտից հետևում է, որ ընդամենը «կասկածվել է», որ խոզերը ախտորոշվել են աֆրիկյան ժանտախտով: Դրանից հետևում է, որ նշված ակտով չի հաստատվում խոզերի անառարկելիորեն աֆրիկյան ժանտախտով հիվանդացած կամ վարակված լինելու փաստը: Ուստիև այդ ակտը միանշանակորեն չի կարող դիտվել որպես 504 գլուխ խոզերի անկման հիմնավորում՝ աֆրիկյան ժանտախտով վարակված լինելու պատճառով:

Այն հանգամանքը, որ պատասխանող կողմը հայցվորին չի հայտնել իր խոշոր տնտեսվարող համարվելու կամ չհամարվելու մասին, դատարանի գնահատմամբ սույն վեճն ըստ էության լուծող դատական ակտ կայացանելու տեսանկյունից որևէ իրավական հետևանք չի կարող առաջացնել այն պարզ պատճառաբանությամբ, որ հայցվորն ինքը դրամական օժանդակություն ստանալու համար Կարգով սահմանված ընթացակարգերը չի պահպանել և առկա չէ Արարատի մարզային հանձնաժողովի և Հանձնաժողովի համապատասխան փաստաթղթերը, որոնք պետք է ներկայացվեին Լիազոր մարմնին՝ օժանդակություն ստանալու համար:

Ինչ վերաբերում է օժանդակություն ստացող սեփականատերերի ցանկում հայցվորի ընդգրկված լինելու և ապա այդ ցանկից նրան հանելու հարցին, ապա դատարանը նշում է, որ սույն գործի փաստերով չի հիմնավորվում, ինչպես հայցվորին համապատասխան ցանկում ընդգրկած լինելու, այնպես էլ այդ ցանկից հանելու փաստը:

Հայցվորը ներկայացրել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության 16.02.2011 թվականի ԱԿ/1451/589 գրությունը, որով հայցվորի դիմումին ի պատասխան հայտնվել է. ՀՀ Կառավարության 2008թ. փետրվարի 7-ի նիստի թիվ 5 արձանագրության 32-րդ հարցի 2-րդ կետի 1-ին ենթակետով ՀՀ գյուղատնտեսության նախարարին հանձնարարվել է ճշտել 2007 թվականի ընթացքում խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած և հարկադիր ոչնչացված կենդանիների սեփականատերերի ցուցակները՝ այնտեղից հանելով խոշոր տնտեսվարող սուբյեկտներին:

Այդ գրությունից ելնելով էլ հայցվորը հետևություն է արել, որ ինքը օժանդակություն ստացողների ցուցակում եղել է, ապա՝ հանել են: Սակայն, ինչպես վերն արդեն նշվել է, սույն գործի փաստերով, նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարության վերոնշյալ գրությամբ, չի հաստատվում, որ հայցվորը օժանդակություն ստացողների ցուցակում եղել է, սակայն հետագայում նրան հանել են՝ իբր խոշոր տնտեսվարող սուբյեկտ համարվելու հիմքով:

Եթե նույնիսկ ՀՀ գյուղատնտեսության նախարարության վերոնշյալ գրությունից եզրահանգում արվի այն մասին, որ հայցվորը խոշոր տնտեսվարող սուբյեկտ համարվելու պատճառաբանությամբ չի ներգրավվել օժանդակություն ստացողների ցուցակում, ապա դատարանը գտնում է, որ հայցվորը այդ ցուցակում չէր էլ կարող ներգրավվել, քանի որ դրա համար անհրաժեշտ էր Կարգի պահանջների պահպանումով համապատասխան ընթացակարգերով Հանձնաժողովի կողմից Լիազոր մարմին ներկայացվեին համապատասխան փաստաթղթեր հայցվորի վերաբերյալ, որը չի կատարվել:

Նկատի ունենալով վերոնշյալ փաստական և իրավական հանգամանքները, դատարանը եզրահանգում է, որ հայցը հիմնավորված չէ և ենթակա է մերժման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատաքննությամբ հաստատված վերոհիշյալ փաստերն ինքնին բավարար են հայցը մերժելու համար, որպիսի պարագայում գործի լուծումը որևէ կերպ պայմանավորված չէ դատավարության մասնակիցների ներկայացրած այլ փաստարկների գնահատմամբ, դատարանը եզրակացրեց, որ այդ փաստարկների գնահատման դատավարական անհրաժեշտությունը բացակայում է:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման և հայցվորը վճարել է հայցադիմումը դատարան ներկայացնելու համար՝ 8.000 դրամ, ինչպես նաև վերաքննիչ բողոքի համար՝ 20.000 դրամ պետական տուրքի գումարները, դատարանը գտնում է, որ պետական տուրքի վճարման հարցը պետք է համարել լուծված:

5.Եզրափակիչ մաս.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 114-րդ, 123-126-րդ հոդվածներով, դատարանը՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. Գեղամ Ալավերդյանի հայցը՝ ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, երրորդ անձ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վարչական մարմնի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու և հետևանքներ կիրառելու պահանջի վերաբերյալ, մերժել:

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

2. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ 2015թ. հունվարի 12-ից, մեկ ամիս հետո:

3. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն վճիռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով ՀՀ վարչական վերաքննիչ դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ ԱՐԹՈՒՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ

_____-ին վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ ԱՐԹՈՒՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ-26
ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻՆ, Գ.ԼԵՎՈՆԻ 23

R
RR167736713AM

Հ.Հ. գյուղատնտեսության նախարար
ք. Երևան, Կառավարական փող. 3

6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

375010, ք. Երևան, Վ. Սարգսյան 5, հեռ. 51-17-18

N ԴԴ-6-Ե-2695
Գործ թիվ ԵԿԴ/3019/02/13
<<14>> մայիսի 2015թ.

ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը
(ՀՀ, ք. Երևան, կառավարական տուն N 3)

Ուղարկվում է ըստ հայցի Շողակաթ Հակոբյանի ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ Նախարարության աշխատակազմի ղեկավարի 22.08.2013 թվականի թիվ 32-Ա (Կ), 15.11.2013 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 46-Ա (Կ), 47-Ա (Կ) և 9 դ/ա հրամաններն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ու հավելավճարների գումարները բռնագանձելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 15.04.2015 թվականի <<Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին>> որոշումը:

ԴԱՏԱՎՈՐԻ ՕԳՆԱԿԱՆ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

18.05.2015
դ/5119-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում
Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3019/02/13
Նախագահող դատավոր՝ Ս. Միքայելյան
Դատավորներ՝ Ն. Բարսեղյան
Հ. Ենոքյան

Քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3019/02/13
2015թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<15>> ապրիլի 2015թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ Վ. ԱԲԵԼՅԱՆԻ
Ա. ԱՆՏՈՆՅԱՆԻ
Պ. ԱՎԱՆԵՍՅԱՆԻ
Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ
Մ. ԴՐՄԵՅԱՆԻ
Գ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆԻ
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ
Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

քննարկելով ըստ հայցի Շողակաթ Հակոբյանի ընդդեմ ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն)՝ Նախարարության աշխատակազմի ղեկավարի 22.08.2013 թվականի թիվ 32-Ա (Կ), 15.11.2013 թվականի թիվ 46-Ա (Կ), 47-Ա (Կ) և 9 դ/ա հրամաններն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու և հարկադիր պարապուրդի ու հավելավճարների գումարները բռնագանձելու պահանջների մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.02.2015 թվականի որոշման դեմ Շողակաթ Հակոբյանի բերած վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը

ՊԱՐԶԵՑ

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Շողակաթ Հակոբյանը պահանջել է անվավեր ճանաչել Նախարարության աշխատակազմի ղեկավարի 22.08.2013 թվականի թիվ 32-Ա (Կ), 15.11.2013 թվականի թիվ 46-Ա (Կ), 47-Ա (Կ) և 9 դ/ա հրամանները, ինչպես նաև վերականգնել իրեն նախկին աշխատանքում և վճարել հարկադիր պարապուրդի ու հավելավճարների գումարները:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 16.08.2014 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 20.02.2015 թվականի որոշմամբ Շողակաթ Հակոբյանի բերած վերաքննիչ բողոքը մերժվել է և Դատարանի 16.08.2014 թվականի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Շողակաթ Հակոբյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Վճռաբեկ բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումների հիմքով:

Բողոքում պատճառաբանվել է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի <<ը>> կետի, 32-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի <<Ծառայողական քննություն անցկացնելու կարգը սահմանելու մասին>> որոշման 3-րդ, 4-րդ, 13-րդ, 14-րդ, 28-րդ և 38-րդ կետերի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 53-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և 130-րդ հոդված 3-րդ կետի պահանջները:

Բողոք բերած անձը սույն վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը պատճառաբանում է հետևյալ հիմնավորմամբ.

Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել առերևույթ դատական սխալ:

Բողոք բերած անձը նշված հիմնավորումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է այն հանգամանքը, որ ծառայողական քննության ավարտին այդ մասին հայտնելու և ծանոթանալու համար նյութերն իրեն չեն տրամադրվել, որի պատճառով ինքը զրկվել է փաստաթղթերից դուրսգրումներ, գրավոր միջնորդություններ անելու և բողոքարկելու հնարավորությունից:

Բացի այդ, Վերաքննիչ դատարանն ուշադրություն չի դարձրել այն հանգամանքին, որ գործում բացակայում է որևէ ապացույց այն մասին, որ ինքը հրավիրվել է և հրաժարվել բացատրություն տալուց:

Բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 20.02.2015 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վճռաբեկ դատարանը, քննարկելով բողոք բերած անձի հիմնավորումը՝ վճռաբեկ բողոքը քննության ընդունելու մասին, գտնում է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը ստորագրում է բողոք ներկայացնող անձի ներկայացուցիչը, գրավոր դատախազը կամ նրա տեղակալը: Բողոքին կցվում է ներկայացուցչի՝ նույն օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագիրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող ֆիզիկական և իրավաբանական անձինք վճռաբեկ բողոք կարող են ներկայացնել միայն փաստաբանի միջոցով:

Տվյալ դեպքում վճռաբեկ բողոքը ստորագրել է Շողակաթ Հակոբյանը և բողոքը չի ներկայացվել փաստաբանի միջոցով:

Մինչդեռ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Շողակաթ Հակոբյանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 223-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը չպահպանելը՝ վճռաբեկ բողոքը փաստաբանի միջոցով չներկայացնելը, խոչընդոտ չէ վճռաբեկ բողոքի ընդունելիության հարցը քննարկելու համար հետևյալ պատճառաբանությամբ.

Վճռաբեկ դատարանը, սահմանափակված լինելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունքով, հաշվի առնելով անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության, ինչպես նաև դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանադրական և միջազգային իրավական չափանիշները, ՀՀ սահմանադրական դատարանի 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները և նպատակ ունենալով ՀՀ սահմանադրական դատարանի 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները ներդնել իրավակիրառ պրակտիկայի հիմքում՝ անմիջականորեն կիրառելով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածների 1-ին մասերը ՀՀ սահմանադրական դատարանի 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192 որոշման մեջ տրված մեկնաբանությամբ՝ արձանագրում է, որ քաղաքացիական դատավարության շրջանակներում անձը կարող է վճռաբեկ բողոք ներկայացնել անմիջականորեն՝ առանց փաստաբանի:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են նույն օրենսգրքի 233-րդ հոդվածով, 233.1-րդ հոդվածով և 234-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, կամ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որ կարող էր ազդել գործի ելքի վրա, կամ առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը նույն օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով ներկայացնելու դեպքում վճռաբեկ բողոք բերած անձը վճռաբեկ բողոքում պետք է նշի այն նյութական կամ դատավարական իրավունքի նորմը, որը խախտվել է՝ հիմնավորելով այդ խախտումը և այն, որ այդ խախտումն ազդել է գործի ելքի վրա: Մինչդեռ սույն գործով բողոք բերած անձի ներկայացրած փաստարկները բավարար չեն դատական սխալի առկայությունը և գործի ելքի վրա դրա ազդեցությունը հիմնավորված համարելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բերված բողոքը չի պարունակում այն քննության ընդունելու վերաբերյալ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված այլ հիմնավորումներ:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքում ներկայացված հիմնավորումը բավարար չի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով բողոքը քննության ընդունելու հետևության հանգելու համար: Հետևաբար ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.2-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.2-րդ և 241.2-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Թիվ ԵԿԴ/3019/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 20.02.2015 թվականի որոշման դեմ Շողակաթ Հակոբյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

Դատավորներ՝ Վ. ԱԲԵԼՅԱՆ

Ս. ԱՆՏՈՆՅԱՆ

Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Մ. ԴՐՄԵՅԱՆ

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ե. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ